ՏՊԱԳՐՎԱԾ Է 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1
կազմված է 17.03.2021թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական հասարակական կազմակերպության 17.03.2021թ. Հիմնադիր ժողովի կողմից
(Արձանագրություն թիվ 1)

Նախագահ՝ __________ Վ. Դաշյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից
« 30 » 03 2021թ.

Գրանցման № 211.171.1170294
Հարկ վճարողի հաշվառման համարը՝
01024427
Պետական ռեգիստրի գործակալություն

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ԿՅԱՆՔԻ ԱՍՏՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.4. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական հասարակական կազմակերպություն, կրճատ՝ Կյանքի աստղի միջազգային կոմիտե, հապավումը՝ ԿԱՄԿ:
Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝ «Международный Комитет Звезды Жизни» Международная Гуманитарная Общественная Организация, կրճատ՝ Международный Комитет Звезды Жизни, հապավումը՝ МКЗЖ:
Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝ "International Committee of the Star of Life" International Humanitarian Non-Governmental Organization, կրճատ՝ International Committee of the Star of Life, հապավումը՝ ICSL:

1.5. Կազմակերպության գործունեության պաշտոնական լեզուներն են՝ անգլերենը, ռուսերենը և հայերենը:

1.6. Կազմակերպությունն ունի հատուկ համազգեստներ, երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) տարբերանշաններ, պաշտոններ, կոչումներ, խրախուսանքի միջոցներ:

1.7. Կազմակերպությունն ունի օրենքով սահմանված իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն:

1.8. Կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

1.9. Կազմակերպության խորհրդանիշն է՝ «Կյանքի աստղ» նշանը, որի շուրջ շրջանաձև՝ անգլերեն տառերով գրված է INTERNATIONAL COMMITTEE (Ինթերնեշնլ քոմիտե) և STAR OF LIFE (Սթար օֆ լայֆ) բառերը: Խորհրդանիշը պատկերված է սույն կանոնադրության հավելվածում:

1.10. Կազմակերպության խորհրդանիշը պատկերվում է ձևաթղթերի, դրոշի, կնիքի, դրոշմի, համազգեստների և անհատականացման այլ միջոցների վրա:

1.11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ավան-Առինջ թաղամաս, 1-ին մ/շ, շ.2/1, բն.3, փոստ՝ 0022, հեռ.՝ 098-933-636, էլ. հասցե՝ lifestarsociety@mail.ru,
կայք՝ https://lifestarsociety.blogspot.com/:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

- 2.1.1. Մարդասիրական գործունեության ծավալում,
- 2.1.2. Կազմակերպության հիմնական սկզբունքների պահպանում և տարածում,
- 2.1.3. Բարոյական, ստեղծագործական, ֆիզիկական ու մտավոր զարգացմանն ուղղված ծրագրերի կազմում և միջոցառումների իրականացում,
- 2.1.4. Սոցիալական, բարեգործական և այլ մարդասիրական նշանակության ծրագերի կազմում և միջոցառումների իրականացում,
- 2.1.5. Կազմակերպության անդամների իրավունքների պաշտպանություն,
- 2.1.6. Ազգային միությունների (կազմակերպությունների) ու ներկայացուցչությունների ճանաչմանն ուղղված ծրագրերի կազմում և միջոցառումների իրականացում:

2.2. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

2.3. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

2.4. Կազմակերպությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ ցանկացած Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ինչպես նաև անդամ դառնալու իրավասություն ունեցող իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

3.2. Կազմակերպության հիմնադիրները հանդիսանում են Կազմակերպության անդամներ:

3.3. Տասնութ տարին լրացած անձը կարող է դառնալ Կազմակերպության անդամ իր դիմումի հիման վրա:

3.4. Տասնչորսից տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված չէ, ապա կարող է դառնալ Կազմակերպության անդամ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.5. Մինչև տասնչորս տարեկան անձը կարող է դառնալ Կազմակերպության անդամ իր ցանկությամբ և օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

3.6. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին:
3.7. Իրավաբանական անձը կարող է դառնալ Կազմակերպության անդամ իր իրավասու մարմնի որոշումը ներկայացնելով Կազմակերպության գործադիր մարմնին:
3.8. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Կազմակերպության գործադիր մարմինը՝ Կազմակերպության նախագահը (այսուհետ՝ Նախագահ), սույն կանոնադրության հիման վրա:
3.9. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
- 4.1.1. ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում, եթե լրացել է նրա տասնութ տարին,
- 4.1.2. ներկա գտնվել Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ լիազոր անձի միջոցով,
- 4.1.3. Նախագահի կողմից սահմանված կարգով անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,
- 4.1.4. ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
- 4.1.5. վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,
- 4.1.6. Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,
- 4.1.7. իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
- 4.2.1. կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

4.2.2. մուծել մուտքի վճար և անդամավճար,

4.2.3. բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

4.3. Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության, խիստ նկատողություն, տրված խրախուսական միջոցներից զրկում կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ բարձրագույն մարմինը՝ Ժողովը, գործադիր մարմինը (մարմնի ղեկավարը)՝ Նախագահը, Փոխնախագահը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ Տնօրինությունը և Գլխավոր քարտուղարը:

5.2. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

5.3. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

5.4. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Նախագահի, Տնօրինության կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

5.5. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

5.6. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

5.6.1. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

5.6.2. այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

5.6.3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,
5.6.4. Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,
5.6.5. Կազմակերպության Նախագահի, Փոխնախագահի, Տնօրինության, Գլխավոր քարտուղարի ընտրությունը և փոփոխումը,
5.6.6. Կազմակերպության կառավարման մարմինների վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
5.6.7. Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,
5.6.8. Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,
5.6.9. հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,
5.6.10. Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,
5.6.11. Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
5.6.12. Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,
5.6.13. օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

5.7. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

5.8. Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

5.9. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

5.10. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝
5.10.1. ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,
5.10.2. տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

5.10.3. ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

5.10.4. տալիս է լիազորագրեր,

5.10.5. բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

5.10.6. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

5.10.7. հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

5.10.8. հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

5.10.9. հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

5.10.10. հաստատում է մուտքի վճարների ու անդամավճարների չափը, վճարման կարգն ու ժամկետները:

5.10.11. հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

5.10.12. ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության անդամությունից,

5.10.13. իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

5.11. Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

5.12. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.13. Կազմակերպության փոխնախագահը (այսուհետ՝ Փոխնախագահ) ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով:

5.14. Փոխնախագահն օգնում է Նախագահի՝ իր լիազորությունների կատարման հարցերում, կատարում է Նախագահի լիազորությունները՝ նրա բացակայության դեպքում:

5.15. Փոխնախագահը Նախագահի լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

5.16. Կազմակերպության Տնօրինությունը (այսուհետ՝ Տնօրինություն) ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով:

5.17. Տնօրինությունը կոլեգիալ կառավարման մարմին է:

5.18. Տնօրինությունը կազմված է Գլխավոր տնօրենից, Տնօրեններից և Տնօրինության անդամներից:

5.19. Տնօրինությունն իր աշխատանքները կատարում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Գլխավոր տնօրենի կողմից ոչ ուշ քան վեց ամիսը մեկ անգամ: Տնօրինության նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության Նախագահի, անդամների 20%-ի կամ Տնօրինության երկու անդամի պահանջով:

5.20. Տնօրինության նիստերը վարում է Կազմակերպության Գլխավոր տնօրենը:

5.21. Տնօրինությունը՝

5.21.1. Առաջարկություններ է ներկայացնում Նախագահին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ:

5.21.2. Կատարում է Նախագահի կողմից տրված պարտադիր ցուցումները, հրամանները և հրահանգները:

5.21.3. Իր իրավասության սահմաններում կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին: Տնօրինության որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Գլխավոր տնօրենի ձայնը վճռորոշ է:

5.21.4. Իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ այլ լիազորություններ:

5.22. Կազմակերպության գլխավոր քարտուղարը (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով:

5.23. Գլխավոր քարտուղարը՝

5.23.1. Ժողովներին քվեարկության դրված հարցերի ժամանակ կատարում է քվեների հաշվում:

5.23.2. Կատարում է Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումների, արձանագրությունների և այլ փաստաթղթերի կազմում և պահպանություն:

5.23.3. Կատարում է Ժողովի կողմից իր վրա դրված այլ լիազորություններ:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

6.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

6.3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

6.3.1. կազմակերպության անդամների ներդրումները, մուտքի վճարները, անդամավճարները,

6.3.2. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

6.3.3. իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,
6.3.4. դրամական մուտքերը պետական բյուջեից,
6.3.5. նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
6.3.6. հանգանակությունները,
6.3.7. օրենքով չարգելված այլ միջոցներ:

6.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

7.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

7.2. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

7.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

*«Կյանքի աստղի միջազգային կոմիտե»*

*միջազգային մարդասիրական*

*հասարակական կազմակերպության*

*ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ*

**«Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական հասարակական կազմակերպության խորհրդանշանի պատկերը**

INTERNATIONAL COMMITTEE

STAR OF LIFE

10 թերթ